




ԴՅՆԱՐԱՆ
LYCEUM

ՄԲ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 01.01.2023





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայություն
2. Նպատակներ և սկզբունքներ
3. Գնահատման փուլեր
4. ՄԲ գնահատումը
5. Դպրոցական գնահատում
 - 5.1. Ձևավորող գնահատում
 - 5.2. Թեմատիկ Գնահատում
 - 5.3. Գնահատման հավելյալ բաղադրիչներ
 - 5.4. Քննություն
6. Ստանդարտացում
7. Գնահատում, վարկանիշավորում և արդյունքների ամփոփում
8. ՄԲ և պետական դիպլոմի գնահատման համակարգը
9. Արդյունքների արձանագրում և հաշվետվություն
10. Վեջնաժամկետների պահպանում
11. Առնչություններ կրթական քաղաքականությունների միջև
12. Դերեր և պարտականություններ
13. Հղումներ
14. Հավելվածներ



1. Փիլիսոփայություն

- 1.1. Գնահատումը ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է: Գնահատման հիմնական նպատակն է խթանել ուսուցման և ուսումնառության գործընթացը՝ հիմք դառնալով գիտելիք, հմտություններ և կարողություններ ձեռք բերելու, սեփական փորձը ընկերներին հաղորդելու հարցում, ինչպես նաև ապահովելով դրա շարունակական զարգացումը: Գնահատումը հնարավորություն է ընձեռում պլանավորել, իրականացնել և վերլուծել ուսուցման և ուսումնառության գործընթացը:
- 1.2. Գնահատումը ենթադրում է տարատեսակ և բազմաբնույթ այնպիսի մեթոդների կիրառություն, որոնք ուսուցչին և աշակերտին հնարավորություն կտան հետազոտելու, արժևորելու ձեռքբերումները, գրանցելու բացթողումները:
- 1.3. Հիմնավորվածությունը, թափանցիկությունը, վստահելիությունը և միասնացումը (ինտեգրումը) չափորոշչային գնահատման հիմնական բնորոշիչներն են: Այս գործընթացն օգնում է որոշելու յուրաքանչյուր աշակերտի առաջընթացի մակարդակը՝ հիմք ունենալով ամեն առարկայի բովանդակության և նպատակներին համապատասխան չափանիշները:

2. Նպատակներ և սկզբունքներ

2.1. Գնահատման նպատակները

- 2.1.1. Խթանել աշակերտների ակադեմիական առաջընթացը նախօրոք պատրաստված և սաներին տեղեկացրած որոշակի/պարզ գնահատման չափանիշների միջոցով
- 2.1.2. Կրթության նկատմամբ շարժառիթների խթանում, ինչպես նաև ցկյանս կրթվելու կենսակերպի ձևավորում
- 2.1.3. Ուսուցիչների և աշակերտների միջև անդրադարձի և հետադարձ կապի ապահովում
- 2.1.4. Անդրադարձի և վերլուծության կիրառում որպես ուսուցման և ուսումնառության անբաժանելի և կարևորագույն բաղադրիչներ



2.1.5. Աշակերտի ձեռքբերումների մակարդակի արձանագրում

2.1.6. ԲՈՒՀ-ի ընդունելության քննությունների պահանջներին համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության ապահովում

2.2. Գնահատման սկզբունքները

2.2.1. ԴԾ գնահատումը սատարում է կրթակարգի ուսումնական և փիլիսոփայական նպատակների իրագործմանը՝ լսարանում արդյունավետ գործնական աշխատանք կազմակերպելու և սովորողներին ոգևորելու միջոցով:

2.2.2. ԴԾ գնահատման արդյունքները հուսալի են և համապատասխանում են բարձրակարգ բուհերի ընդունելության չափանիշներին:

2.2.3. ԴԾ գնահատումը միջազգային մտածելակերպի արտացոլումն է, և նպաստում է ՄԲ սովորողի նկարագրի ձևավորմանը:

2.2.4. ԴԾ գնահատումը կարևորում է ոչ միայն հիմնական ճանաչողական հմտությունների, այլ նաև խորը գիտելիքների ձեռքբերումը և մտածական հմտությունների զարգացումը:

2.2.5. Յուրաքանչյուր առարկայի գնահատումը ներառում է չափանիշների հիման վրա կազմված առաջադրանքների և գործիքների/բաղադրիչների մի շարք, որոնք ապահովում են առարկայի բոլոր նպատակների իրականացումը: (Հավելված 1).

2.2.6. Ուսուցիչները նպատակադրված գնահատման ռազմավարություններն ազատորեն ընտրելու իրավունք ունեն՝ կիրառելով անհատական կամ խմբակային գնահատման տեսակները:

2. Գնահատման փուլեր

Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի.

3.1 Գնահատում. ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՞նչ գիտեն և ի՞նչ են սովորել սաները:

3.2. Գրանցում. ինչպե՞ս ենք հավաքում, վերլուծում և ամփոփում տվյալները:

3.3. Հաշվետվություն. ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկությունը կամ գնահատման արդյունքները:

3. ՄԲ գնահատումը

ՄԲ-ն առաջարկում է կիրառել գնահատման երկու տեսակ՝ ներքին և արտաքին:



- 3.1. ՄԲ դասընթացների համար պահանջվում է ներքին գնահատման բաղադրիչի կատարում: Ներքին գնահատումը իրականացնում է դպրոցը, բայց միավորների միջինացումն իրականացնում է ՄԲ-ի գրասենյակը: Լրացուցիչ տեղեկությունը հասանելի է **Առարկայական ուղեցույցում և Հավելված 1-ում**:
- 3.2. Արտաքին գնահատումն իրականացվում է Միջազգային Բակալավրիատի (ՄԲ) գրասենյակում. սա հիմնականում որակավորման ցուցիչ է բուհի ընդունելության համար: Լրացուցիչ տեղեկությունը հասանելի է **Առարկայական ուղեցույցում և Հավելված 1-ում**:
- 3.3. ՄԲ ավարտական քննությունները անցկացվում են ավագ՝ 12-րդ դասարանում մայիս ամսին՝ ՄԲ պահանջներին համապատասխան: Արդյունքները հրապարակվում են հուլիսի 6-ին: (www.candidates.ibo.org).
- 3.4. Արտաքին գնահատումը (քննություններ) անցկացվում է ընտրված վեց առարկաներից, այդ թվում՝ ծավալուն էսսե (EE) և Իմացության տեսություն (TOK). էսսե:
- 3.5. Թեկնածուները ՄԲ-ում իրավասու են բողոքարկել վերջնական գնահատականը կամ վերահանձնել ՄԲ վերջնական գնահատականի մեկ կամ ավելի բաղադրիչ՝ համաձայն «Դիպլոմային Ծրագիր. Գնահատման ընթացակարգ» փաստաթղթի:

4. Դպրոցական գնահատում

4.1. Ձևավորող գնահատում

5.1.1. Ձևավորող գնահատման նպատակը

5.1.1.1. Ձևավորող գնահատումը տեղեկություններ, փաստեր հավաքելու, դրանք կիրառելու, վերլուծելու, բացատրելու և անդրադարձ կատարելու գործընթաց է, որն օգնում է սովորողին բարելավելու ուսումնական գործընթացը և հասնելու լավագույն արդյունքների:

5.1.1.2. Ձևավորող գնահատումը ուսուցման և ուսումնառության գործընթացում միտում ունի մոտիվացնելու սովորողին, խրախուսելու ձեռքբերումները, հնարավորություն է ընձեռում ձեռքբերած հմտությունները ներկայացնելու պատշաճ ձևով և նպաստում է ինքնագիտակցության և ինքնակառավարման զարգացմանը:



5.1.1.3. Ձևավորող գնահատումը նպատակ ունի ապահովել արդյունավետ հետադարձ կապ. սա սովորողին հնարավորություն է տալիս տեղեկացված լինելու ուսումնառության ընթացքում ձեռքբերումների, արդյունքների և բացթողումների մասին: ՁԳ օգնում է սովորողներին հասկանալու իրենց ուժեղ կողմերը և ցույց է տալիս այն միջոցները, որոնց կիրառությամբ կարելի է գրանցել կրթական առաջընթաց:

5.1.1.4. Ձևավորող գնահատումը կիրառվում է ՄԲ աշակերտների՝ ամսական ամփոփման ընթացքում հանրային ծառայության (CAS) իրականացումը գնահատելու համար (Հավելված 4):

5.1.1.5. Ձևավորող գնահատումը իրականացնելիս առավել կարևոր է ճշգրիտ նախանշել սովորողի գիտելիքի, ըմբռնողության, հմտությունների զարգացման հնարավորությունները, քան որոշել յուրաքանչյուր աշակերտի ձեռքբերումների մակարդակը: (Դիպլոմային Ծրագրի գնահատման սկզբունքները և փորձառությունը, 2010).

5.1.2. Ձևավորող գնահատման առաջադրանքները

ԴԾ-ում որպես ձևավորող գնահատման առաջադրանքներ կիրառվում են.

5.1.2.1. Քննարկումներ, ախտորոշիչ թեստավորում, բանավոր ներկայացում, հարցաշար, լուծումներ պահանջող խնդիրներ, դիագրամներ, էլքի տոմս, խմբակային/գույգերով համագործակցային աշխատանք, լաբորատոր աշխատանք, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, թղթապանակ, պլակատ, ինֆոգրաֆիկ հարցաշարեր, Վեննի դիագրամ, աղյուսակներ, SEEP վերլուծություններ, KWL անդրադարձներ, SWOT վերլուծություններ, Ֆրայերի աղյուսակներ, հասկացության արտացոլումը քարտեզավորման միջոցով, Քորնելի նշումներ և այլն:

5.1.3. Ձևավորող գնահատման տեսակները

Ճեմարանում կիրառվում են երկու տեսակի ձևավորող գնահատում՝ **կշիռ չունեցող և կշիռ ունեցող:**

5.1.3.1. Կշիռ չունեցող ձևավորող գնահատումը կիրառվում է զարգացնելու համապատասխան հմտությունները և աջակցում աշակերտներին ուսումնառության գործընթացում:

5.1.3.2. Կշիռ ունեցող ձևավորող գնահատումը նպատակ ունի որոշակի ժամանակահատվածի



համար ամփոփելու ձեռքբերված գիտելիքները և հմտությունները՝ ուսուցումը սովորողների կարիքներին համապատասխանեցնելու համար:

- 5.1.3.3. Կշիռ ունեցող ձևավորող գնահատման ընդհանուր կուտակային միավորը կազմում է կիսամյակի ընթացքում ձեռքբերված միավորների միջին գնահատականի 10%:
- 5.1.3.4. Առնվազն երկու ձևավորող գնահատում պետք է իրականացնել յուրաքանչյուր թեմատիկ կամ ամփոփիչ աշխատանքից առաջ:
- 5.1.3.5. Բաց թողած կշիռ ունեցող ձևավորող աշխատանքների լրացում չի կազմակերպվում և աշակերտը գնահատվում է N/A , սակայն աշակերտներին հնարավորություն է տրվում լրացնել առաջին բաց թողած աշխատանքը և ստանալ հետադարձ կապ ուսուցիչների կողմից: Երբ աշակերտը նույն կիսամյակի ընթացքում բաց է թողնում նաև երրկրորդ և երրորդ ձևավորող աշխատանքը նույն առարկայից, նա մեխանիկորեն գնահատվում է մեկ (1): Հատուկ դեպքերը ենթակա են մանկավարժական առաջնորդության քննարկմանը:

5.2. Թեմատիկ Գնահատում

5.2.1. Թեմատիկ գնահատման նպատակը

5.2.1.1. Թեմատիկ գնահատումը (նաև Թեմատիկ) իրականացվում է՝ որոշելու աշակերտների ձեռքբերումների/առաջընթացի մակարդակը:

5.2.1.2. Թեմատիկ աշխատանքները նպատակ ունեն աշակերտներին առավելագույնս պատրաստելու արտաքին գնահատման համար, ինչպես նաև աշակերտների առաջադիմության ցուցիչի դեր են կատարում:

5.2.2. Թեմատիկ գնահատման առաջադրանքները

Դիպլոմային Ծրագրում կիրառվում են Թեմատիկ գնահատման հետևյալ առաջադրանքները՝

5.2.2.1. Էսսե, կարճ/համառոտ հարց-պատասխան, փաստերի հիման վրա տրվող հարցեր, տեքստային պատասխան ունեցող հարցեր, կոնկրետ դեպքի ուսումնասիրությանը վերաբերող հարցեր, տարբերակներով հարցեր, տեսա կամ վիզուալ պատկերների վերլուծություն, խնդրի լուծում պահանջող առաջադրանքներ, նախագծեր, քննարկումներ, բանավոր ելույթ-ներկայացում, զեկուցում, հարցաշար, լաբորատոր աշխատանքներ և այլն:



5.2.3. Թեմատիկ գնահատման ընթացակարգը

5.2.3.1. Հետազոտական յուրաքանչյուր միավոր ուղեկցվում է թեմատիկ աշխատանքով:

5.2.3.2. Առնվազն երկու թեմատիկ գնահատում պետք է իրականացնել յուրաքանչյուր ակադեմիական կիսամյակի ընթացքում:

5.2.3.3. Թեմատիկների ընդհանուր կուտակային միավորը կազմում է կիսամյակի ընթացքում ձեռք բերած գնահատականների 75%:

5.2.3.4. Կիսամյակային քննությունները ունեն նույն կշիռը, ինչ թեմատիկ գնահատումը:

5.2.3.5. Կիսամյակային քննություններն իրականացվում են առաջին կիսամյակի վերջում բոլոր ՄԲ ԴԾ տարիքային խմբերում և ներառում են ամբողջ կիսամյակի ընթացքում յուրացրած նյութերը:

5.2.3.6. Թեմատիկ գնահատման անցկացման ամսաթվերը պետք է նախօրոք նշել դպրոցի Գնահատման օրացույցում:

5.2.3.7. Սովորողները նախօրոք պետք է տեղեկացված լինեն առաջադրանքների ձևաչափի, հատկացված ժամանակի և չափանիշի, գնահատման սանդղակի (ռուբրիկի), ինչպես նաև Թեմատիկ գնահատման ակնկալվող արդյունքների մասին:

5.2.3.8. Թեմատիկ առաջադրանքների արդյունքները պետք է վերլուծել հաջորդ շաբաթվա ընթացքում և ապահովել համապատասխան հետադարձ կապը, գնահատականները/թվանշանները պետք է գրի առնել մատյանում:

5.2.3.9. Միավորի գնահատման վերջնաժամկետը կարող է լինել առարկայի նախավերջին դասը:

5.2.3.10. Փորձնական գնահատում: Երկրորդ կիսամյակի ընթացքում (փետրվար 1-20) ավարտական խմբի աշակերտները կհանձնեն իրենց Փորձնական քննությունները. որի արդյունքները համարվում են որպես երկրորդ կիսամյակի թեմատիկ գնահատման արդյունք:

Փորձնական քննությունները գնահատման սանդղակ է ընդունվում ՄԲ մայիսյան ամենավերջին քննությունների առարկայական սանդղակները:

5.2.3.11. Թեմատիկից անհարգելի բացակայությունների դեպքում աշակերտը մեխանիկորեն



ստանում է մեկ (1) գնահատական:

- 5.2.3.12. Առողջական խնդիրների կամ այլ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր առարկայից միայն մեկ բաց թողնված թեմատիկի լրացում է կազմակերպվում ԴԾ համակարգողի հաստատումով:
- 5.2.3.13. Նոր թեստը կազմում է առարկան դասավանդող ուսուցիչը՝ բաց թողնված թեմատիկների լրացման ժամանակաշրջանի համար:
- 5.2.3.14. Բաց թողնված թեմատիկների լրացումը կազմակերպելու և իրականացնելու համար պատասխանատվություն են կրում ԴԾ տեսուչը, ԴԾ կազմակերպիչը և առարկայական ուսուցիչները:
- 5.2.3.15. Չկանխատեսված իրավիճակները և հանգամանքները, որոնք չեն կարգավորվում Գնահատման քաղաքականությամբ, ենթակա են ձեմարանում առկա հատուկ ընթացակարգի:

5.3. Գնահատման հավելյալ բաղադրիչներ

5.3.1. Յուրացման առաջադրանք

- 5.3.1.1. Յուրաքանչյուր դասարանում աշակերտներին հանձնարարվում է յուրացման պարտադիր առաջադրանք ավելի լավ ըմբռնելու/հասկանալու ուսումնասիրվող նյութը:
- 5.3.1.2. Այսպիսի առաջադրանքների կատարումը ստուգում է ուսուցիչը յուրաքանչյուր դասի և գրառումներ կատարում մատյանում:
- 5.3.1.3. Եթե աշակերտը չի ներկայացնում յուրացման աշխատանքի կատարումը երեք անգամ, ծնողին տեղեկացնում են չկատարված հանձնարարության մասին:
- 5.3.1.4. Տնային առաջադրանքի կատարումը կազմում է կիսամյակային գնահատականի 5% :

5.3.2. Թղթապանակ

- 5.3.2.1. Ուսուցիչները կիրառում են թղթապանակները՝ գնահատելու աշակերտին և ուսումնական գործընթացը՝ համոզվելու համար, որ աշակերտները կարողանում են անդրադարձ կատարել իրենց առաջընթացի և եզրահանգումներ կատարելու մասին:



- 5.3.2.2. Աշակերտներից պահանջվում է ստեղծել թղթապանակ յուրաքանչյուր առարկայի համար՝ հետևելով ուսուցչի առաջադրած չափանիշներին:
- 5.3.2.3. Թղթապանակները գնահատվում են կիսամյակը առնվազն մեկ անգամ: Սա կազմում է կիսամյակային գնահատականի 5 %:
- 5.3.3. Վարք և մասնակցություն
 - 5.3.3.1. Աշակերտները գնահատվում են ամսական երկու անգամ՝ հիմք ընդունելով իրենց պատրաստվածությունը դասին, համագործակցությունը, ակտիվ մասնակցությունը, ՄԲ սովորողի նկարագրին համապատասխան որակների դրսևորումը:
 - 5.3.3.2. Վարքը և մասնակցությունը կազմում են կիսամյակային գնահատականի 5% :
- 5.4. **Քննություն**
 - 5.4.1. Տարեվերջյան քննություններ
 - 5.4.1.1. Առաջին տարվա ավարտին (հունիս 3-20) ՄԲ աշակերտները հանձնում են տարեվերջյան քննություններ ընտրված 6 առարկաներից և ապահովում ՄԲԴՄ ակադեմիական օրացույցով նախատեսված ԴԾ միջուկ/առանցքային բաղադրիչների՝ ծավալուն էսսեի (EE), Իմացության տեսության (TOK) և Հանրային ծառայության (CAS) պահանջները:
 - 5.4.1.2. Տարեվերջյան քննությունը նպատակ ունի չափելու սովորողների՝ ողջ տարվա ընթացքում ուսուցանվող դասընթացի թեմաների ընդհանրական իմացությունը:
 - 5.4.1.3. Քննությունը ներառում է արտաքին գնահատման ոճի հարցեր, ինչպես նաև ներքին գնահատման բաղադրիչներ: Տարեվերջյան քննությունները իրականացվում են համաձայն ՄԲ քննությունների ընթացակարգերի:
 - 5.4.1.4. Տարեվերջյան քննության գնահատականը կազմում է տարեկան գնահատականի 33.(3) %:
 - 5.4.2. Վերահանձնում
 - 5.4.2.1. Եթե աշակերտը տարեվերջյան քննությունից հավաքում է ավելի քիչ, քան 50%, ապա նա պետք է վերահանձնի քննությունը: Այսպիսի վերահանձնման հնարավորությունը երկուսն են. Առաջին վերահանձնման արդյունքը (հունիս 24-28) կազմում է տարեկան



գնահատականի 50%, այնուամենայնիվ, եթե աշակերտը հավաքում է ավելի քան 50% երկրորդ վերահանձնման ժամանակ (օգոստոս 22-27), վերահանձնման արդյունքը համարվում է տարեկան գնահատական:

5.4.2.2. Եթե սանը չի հաղթահարում երկրորդ վերահանձնումը, հարցը վերանայվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության նիստի ընթացքում և վերջնական որոշումը կայացվում է տնօրենության խորհրդի կողմից:

5.4.2.3. Տարեվերջյան քննություններից չորս և ավելի առարկաներից անբավարար գնահատական (ավելի քիչ քան ընդհանուրի 50%) ստացած աշակերտի՝ Դիպլոմային ծրագրում հետագա ուսումնառության հարցը քննարկվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության նիստի ընթացքում: Վերջնական որոշումը կայացվում է տնօրենության խորհրդի կողմից:

5.4.2.4. Եթե սանը տարեվերջյան քննություններից ստանում է դրական գնահատական, սակայն տարեկան վերջնական արդյունքը անբավարար է, նա պետք է վերահանձնի տվյալ առարկան՝ ըստ 5.4.2.1. կետի:

5.4.2.5. Վերահանձնման հետ կապված ցանկացած չճշտված դեպք վերանայվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության և ձեմարանի տնօրենության խորհրդի կողմից:

5.4.3. Գնահատականի բարձրացում

5.4.3.1. Աշակերտներին հնարավորություն է տրվում բարձրացնել տարեվերջյան գնահատականը (հունիս 24-28) :

5.4.3.2. Հայցը անհրաժեշտ է ներկայացնել մինչև ընթացիկ ակադեմիական տարվա հունիսի 24-ը:

5.4.3.3. Աշակերտները, որոնք ձախողվել են տարեվերջյան քննությունից, թույլ չի տրվի բողոքարկել տարեվերջյան գնահատականը:

5.4.3.4. Գնահատականի բարձրացման համար կազմված առաջադրանքները տարբերվում են տարեվերջյան քննության առաջադրանքներից իրենց ձևաչափով, որը յուրաքանչյուր



առարկայի համար որոշվում է դասավանդող ուսուցիչը նախքան գնահատականի բարձրացման համար գրանցվելու վերջնաժամկետը:

5.4.3.5. Արդյունքներից ամենաբարձրը ընդունվում է որպես տարելերջյան գնահատական:

6. Ստանդարտացում

Այն դեպքերում, երբ ավելի քան մեկ ուսուցիչ դասավանդում է նույն առարկան կամ նույն առարկայական խմբի ուսուցիչները, որոնք դասավանդում են նույն տարիքային խմբերում, առաջադրանքների բովանդակությունը, գնահատման սանդղակը (ռուբրիկը), թեմատիկների և ձևավորող գնահատման արդյունքները ենթակա են ներքին ստանդարտացման՝ ապահովելով կայուն ըմբռնումը և չափանիշների կիրառումը:

6.1. Ստանդարտացման նպատակները

6.1.1. Ապահովել վստահելի/հուսալի, վավերական և թափանցիկ գնահատում:

6.1.2. Ապահովել/երաշխավորել ընդհանուր ըմբռնումը, մեկնաբանումը և գնահատման չափանիշի կիրառումը:

6.1.3. Ապահովել միասնական մոտեցում ուսումնական և գնահատման գործընթացում:

6.1.4. Մշտադիտարկել գնահատման գործիքները, սանդղակը (ռուբրիկը), մեթոդները և դրանց արդյունավետությունը:

6.2. Ստանդարտացման գործընթացի մասնակիցները

6.2.1. Ուսուցիչները

6.2.2. Դպրոցի ղեկավարը, աշակերտները, ծնողները, տնօրենը, անհրաժեշտության դեպքում նաև համակարգողները:

6.3. Ստանդարտացման հաճախականությունը

6.3.1. Ստանդարտացումը յուրաքանչյուր կիսամյակում իրականացվում է 2-3 անգամ և երբ զգացվում է դրա անհրաժեշտությունը:



6.4. **Մտանդարտացման ընթացակարգը**

6.4.1. Առարկայական խմբերում և նույն առարկաների տիրույթում, ստանդարտացման գործընթացը սկսվում է հետազոտական միավորի պլանավորման հետ մեկտեղ. բոլոր միավորները ներառում են ձևավորող և թեմատիկ առաջադրանքներ համապատասխան գնահատման գործիքներով և ռազմավարությամբ, ինչպես նաև միջառարկայական գնահատման պլանավորումը: Գնահատման ժամանակաշրջանում վերոնշյալ ուսուցիչները գնահատում են պատահական ընտրված 4 կամ 5 աշխատանքը, այնուհետև ամփոփում են արդյունքները, քննարկում և անհրաժեշտության դեպքում վերափոխում գնահատման սահմանները: Եվ վերջապես ստանդարտացման ձևանմուշը լրացնում են և ստորագրում: (Հավելված 6).

7. Գնահատում, վարկանիշավորում և արդյունքների ամփոփում

7.1. **Ընդհանուր գնահատման համակարգ**

7.1.1. Գնահատման համար սահմանվում է A 1 մինչև 7 գնահատման սանդղակը (հավելված 2):

7.1.2. 1-ից մինչև 3 միավորը համարվում է անբավարար:

7.1.3. Աշակերտը մեխանիկորեն ստանում է զրո (0) ակադեմիական սխալ արարք կատարելու համար (տես՝ Ակադեմիական ազնվության քաղաքականություն):

7.1.4. Աշակերտը մեխանիկորեն ստանում է զրո (1) առաջադրանքի համար սահմանված ժամկետները չպահելու համար:

7.2. **Կիսամյակային գնահատականի հաշվարկում**

7.2.1. Կիսամյակային վերջին գնահատականը հաշվարկվում է միջինացնելով բոլոր թեմատիկ և կիսամյակային գնահատականները, որը կազմում է ուսանողի ստացած գնահատականի (75%), ինչպես նաև լրացուցիչ ձևավորող գնահատման բաղադրիչների կուտակային միավորը (յուրացման աշխատանք, թղթապանակ, վարքը և մասնակցությունը և ձևավորող առաջադրանքները), որը կազմում է կիսամյակի ընթացքում ձեռքբերած միջին գնահատականի 25% (հավելված 3):

7.2.2. Եթե բացակայությունները գերազանցում են առարկայի համար սահմանված ժամաքանակի 15%-ը, ապա տվյալ առարկայի կիսամյակային գնահատականից հանվում է մեկ միավոր:



7.3. Վերջնական գնահատականի հաշվարկ

7.3.1. ՄԲ առարկայից տարեկան վերջնական գնահատականին հասնելու համար անհրաժեշտ է միացնել ակադեմիական կիսամյակների և վերջնական քննության միջին գնահատականը:

7.3.2. Տարեկան միջին միավորը ոչ ՄԲ խմբերի համար պետք է համարել վերջնական գնահատական:

7.4. Կանխատեսելի գնահատականներ

7.4.1. Կանխատեսելի գնահատականները տրվում են երեք անգամ (սեպտեմբեր, հունվար և մարտ ամիսներին) ՄԲ երկրորդ/ավագ դպրոցում (12-րդ դասարանում): Ուսուցիչները կանխատեսումներ են անում՝ հիմք ունենալով մասնագիտական դատողությունը և աշակերտների առաջադիմությունը:

7.5. Վարկանիշավորում

7.5.1. Աշակերտների վարկանիշավորումը հաշվարկվում է՝ նույն ավարտական տարվա ընթացքում աշակերտների հավաքած վերջնական միավորների համաձայն:

7.5.2. Առավելագույնը երկու վարկանիշ ստացած (կշիռ չունեցող GPA 3.9 և ավելի) աշակերտները պարգևատրվում են խրախուսական պատվոգրով և տեղ են գտնում Ճեմարանի ԴԾ պատվոգրեր ստացողների ցանկում:

7.5.3. Վարկանիշը՝ որպես պաշտոնական արձանագրության մի մաս, ուղարկվում է բուհի՝ ընդունելության հարցերով զբաղվող գրասենյակ:

7.6. Արդյունքների ամփոփում

7.6.1. Այն աշակերտները, որոնց առաջին տարվա վերջում ընտրված 6 առարկաներից ստացած տարեկան վերջին գնահատականը՝ կուտակային միավորը, 24 միավորից ցածր է, կամ/և ԴԾ հիմնական առարկաների պահանջները չեն կատարել, ՄԲ դիպլոմ ստանալու երաշխավորություն չեն ստանում: Այդպիսի աշակերտները գրանցվում են ՄԲ ԴԾ վերջնական քննություններին մասնակցելու համար՝ ՄԲ ԴԾ վկայական ստանալու նպատակով:

7.6.2. Եթե աշակերտը ունի չորս (4) բացասական գնահատական կիսամյակային գնահատականների արդյունքներով, սանի հետագա ուսումնառության հարցը քննարկվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության նիստի ընթացքում և վերջնական որոշումը կայացվում է տնօրենության



խորհրդի կողմից:

7.6.3. Եթե աշակերտը ունենում է չորս (4) բացասական գնահատական տարեվերջյան քննությունների արդյունքում, ծնողի հետ լուծվում է կրթական ծրագրի իրականացման պայմանագիրը:

8. ՄԲ և պետական դիպլոմի գնահատման համակարգը

8.1. Այն աշակերտները, որոնք հանձնում են և ՄԲԴԾ և Ճեմարանի պետական ծրագիրը, գնահատվում են երկու ծրագրերի համար:

8.2. Այն առարկաների ուսումնառությունը, որոնք ներառված են երկու ծրագրերում, գնահատվում է համաձայն ընթացիկ փաստաթղթի պայմանների և գնահատման սանդղակի: (հավելված 2 և 4):

8.3. Այն առարկաների ուսումնառությունը, որոնք ներառված են Ճեմարանի միայն պետական ծրագրով, գնահատվում են՝ համաձայն Ճեմարանի ավագ դպրոցի պետական ծրագրի գնահատման քաղաքականության:

8.4. Աշակերտները պետք է հանձնեն պետական քննություններ հայերեն, մաթեմատիկա, հայոց պատմություն առարկաներից առաջին կիսամյակի վերջում կամ 12 -րդ դասարանի երկրորդ կիսամյակի վերջում:

9. Արդյունքների արձանագրում և հաշվետվություն

9.1. Արձանագրում

9.1.1. Հետազոտական միավորի արդյունքները գրանցվում են ManageBac –ի մատյանում:

9.2. Հաշվետվություն

9.2.1. Բոլոր ուսանողներն ու ծնողները ManageBac առցանց պլատֆորմի միջոցով կիսամյակի ընթացքում երկու անգամ ստանում են սովորողների առաջընթացի մասին հաշվետվության քարտեր:

9.2.1.1. Ուսուցիչները (ներառյալ TOK-ը) ներկայացնում են սովորողի ձեռքբերումները, մարտահրավերները, դասի մասնակցությունը, հաճախելիությունը, գնահատականները և բարելավումների վերաբերյալ նրանց առաջարկությունները:

9.2.1.2. Ծավալուն էսսեի (EE) և Հանրային ծառայության (CAS) համակարգողները ներկայացնում են



ուսանողների առաջընթացը CORE բաղադրիչների մասով:

9.2.1.3. ԴՕ ուսանողական առաջնորդը տեղեկություն է ներկայացնում՝ հիմնվելով սովորողի պրոֆիլի հատկանիշների վրա:

9.2.1.4. UGC- ն տեղեկություն է տրամադրում ուսանողի համալսարանական առաջընթացի մասին:

9.2.2. 12-րդ դասարանի աշակերտները, որոնք մայիսին հանձնելու են ավարտական քննություններ, վաղ ավարտում են իրենց ուսումնաժամկետը, և ավարտական կիսամյակի նրանց հաշվետվությունը տրվում է նախքան ավարտելը:

9.2.3. Ամենամյա տարեկան գնահատականների փաստաթուղթը, որը ցույց է տալիս ուսանողների ակադեմիական առաջադիմությունը, ներառում է յուրաքանչյուր կիսամյակի համար ստացված գնահատականները և միջին որակական գնահատականը (GPA), վերջինն էլ հաշվարկվում է ինչպես կշիռ ունեցող, այնպես էլ կշիռ չունեցող սանդղակի հիման վրա (տե՛ս GPA հաշվարկման քաղաքականություն): Խորացված դասընթացների սովորողների առաջադիմությունը 3 միավորից բարձր լինելու դեպքում տվյալ առարկայի համար տրվում է հավելյալ միավոր:

9.3. Ծնողական հանդիպումներ

Ծնողական հանդիպումները ուսումնական տարվա ընթացքում գումարվում են երեք անգամ, որոնց ընթացքում ներկայացվում են հետևյալ պահանջները՝

9.3.1. Առարկայի պահանջները, բովանդակությունը, գնահատման նպատակները:

9.3.2. Ուսուցման ռազմավարություն, ուսման արդյունքները և սովորողների պարտականությունները:

9.3.3. Սովորողի առաջընթացը (ձեռքբերումներ, մարտահրավերներ և հնարավոր լուծումներ):

9.4. Ուսանողական հանդիպումներ

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են աշակերտական հանդիպումներ (եռակողմ հանդիպումներ՝ ծնող-ուսուցիչ-աշակերտ), որի ընթացքում սովորողներն անդրադառնում են իրենց նվաճումներին, թերացումներին, ինչպես նաև մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ ձեռնարկվելիք գործողություններին:

10. Վեջնաժամկետների պահպանում

10.1. Եթե սովորողները չեն պահպանում ներքին գնահատման առաջադրանքների, ինչպես նաև



դասընթացների, դպրոցական ակադեմիական օրացույցով սահմանված այլ առաջադրանքներ ներկայացնելու ժամկետները, հնարավոր է՝ չկարողանան աշխատանքը IBO ներկայացնել, ինչի արդյունքում կստանան մերժում:

11. Առնչություններ կրթական քաղաքականությունների միջև

11.1. Լեզվի քաղաքականություն

11.1.1. Եթե սովորողի մայրենի լեզուն հայերենը չէ, նա ներառվում է հայագիտության դասընթացում, որտեղ կիրառելի է միայն կշիռ չունեցող ձևավորող գնահատումը:

11.2. Ներառման քաղաքականություն

11.2.1. Եթե սովորողը բնութագրվում է ճեմարանի ներառական կրթության քաղաքականության մեջ նշված բաղադրիչներից որևէ մեկով, ուսուցիչները, համագործակցելով ԿԱՊ համակարգողի, ինչպես նաև հոգեբանական ծառայության հետ, պատրաստում են գործին վերաբերող հատուկ փաստաթուղթ:

11.2.2. ՄԲ (IB)-ի արտաքին գնահատման և քննական ընթացակարգերը ներառական կրթության սովորողների համար ևս կիրառելի են:

11.2.3. **Անհատական ուսուցում:** Եթե սովորողը ընդունվել է ճեմարան և չի դրսևորում բավարար գիտելիքներ և հմտություններ մեկ կամ մի քանի առարկաներից, ապա նա գնահատվում է հատուկ մշակված անհատական գնահատման ծրագրի հիման վրա, որը հաստատվում է ՄԲԴԾ (IBDP) համակարգողի և տվյալ առարկայի ամբիոնի ղեկավարի կողմից:

11.3. Ակադեմիական ազնվության քաղաքականություն

11.3.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին սովորողները ծանոթանում են դպրոցի ակադեմիական ազնվության քաղաքականությանը, ապա ստորագրում կանոնակարգը պահպանելու խոստումը:

11.3.2. Ակադեմիական ազնվության սկզբունքները պետք է խստորեն պահպանվեն բոլոր տեսակի առաջադրանքները կատարելիս:

11.3.3. Արտաքին քննությունների ընթացքում ակադեմիական անազնվության հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են Միջազգային բակալավրիատի պահանջների համաձայն (տե՛ս [Academic Integrity IBO 2019](#), Հավելված 2).



11.4. Ընդունելության քաղաքականություն

11.4.1. ԴԾ ընդունելությունն անցկացվում է մրցությային հիմունքներով՝ հաշվի առնելով ՄԲԴԾ (IBDP) դիմորդների ընդունելության քննությունները (անգլերեն, մաթեմատիկա) և հարցազրույցի արդյունքները:

11.4.2. Հաջողության հասած դիմորդները պետք է բավարարեն քննական նվազագույն շեմը, որը հիմնված է համեմատական վերլուծության վրա, և բարձր արդյունավետություն դրսևորեն հարցազրույցի ընթացքում: Հատուկ դեպքերում, այն թեկնածուների համար, ովքեր չեն բավարարում պահանջներից որևէ մեկը, ընդունող հանձնաժողովը կարող է որոշում կայացնել թեկնածուին ընդունել պայմանական հիմունքներով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Կիսամյակն ավարտելուց հետո դպրոցի տնօրենների խորհուրդը որոշում է կայացնում՝ դիտարկելով աշակերտի՝ ՄԲԴԾ (IBDP)-ում ուսումը շարունակելու հնարավորությունը. այս դեպքում ելակետային են սովորողի առաջադիմությունը և սովորողի նկարագրին համապատասխան որակների առկայությունը (տե՛ս IBDP ընդունելության քաղաքականություն):

12. Դերեր և պարտականություններ

Դպրոցական ողջ համայնքը պատասխանատու է գնահատման քաղաքականության իրականացման համար:

12.1. Դպրոցի տնօրենություն

12.1.1. Դպրոցի ղեկավարությունը պատասխանատու է գնահատման քաղաքականության ձևավորման, դրա վերահսկողության և տարեկան վերանայման համար:

12.1.2. Դպրոցի ղեկավարությունը պատասխանատու է ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման սեմինարների կազմակերպման համար:

12.2. Ուսուցիչ

Ուսուցիչները պարտավոր են՝

12.2.1. գնահատումը համարել ուսուցման և ուսումնառության պլանավորման ամենաառաջնական բաղադրիչը.



- 12.2.2. շարունակաբար ուսումնասիրել գնահատման քաղաքականությունը և դասընթացները ձևավորել՝ համապատասխան վերջինիս բովանդակությանը և պահանջներին.
- 12.2.3. իրականացնել առարկայի չափանիշներին վերաբերող գնահատումներ, որոնք համապատասխանում են գնահատման քաղաքականությանը և ՄԲ (IB) գնահատման ուղեցույցին.
- 12.2.4. ստեղծել գնահատման խորագրեր և այլ փաստաթղթեր.
- 12.2.5. ներգրավել ուսանողներին գնահատման պլանավորման գործընթացում.
- 12.2.6. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին.
- 12.2.7. սովորողներին տեղեկացնել գնահատման չափանիշների առանձնահատկությունների մասին.
- 12.2.8. աջակցել սովորողների ինքնագնահատմանը, ինքնավերլուծությանը, ինքնակազմակերպման հմտությունների զարգացմանն ու արտահայտմանը.
- 12.2.9. սովորողներին տրամադրել բավարար ժամանակ՝ գնահատվող առաջադրանքի վրա աշխատելու և կատարելու համար.
- 12.2.10. հստակեցնել յուրաքանչյուր առաջադրանքի կամ վերջինիս համար պահանջվող քայլերը՝ սովորողներին տեղեկացնելով գնահատման համապատասխան չափանիշների մասին.
- 12.2.11. գնահատել սովորողների ներկայացրած բոլոր աշխատանքները և դրանք առանց հապաղելու վերադարձնել նրանց:

12.3. Մովորող

Մովորողները պարտավոր են՝

- 12.3.1. կարևորել գնահատումը՝ որպես ուսումնառության անբաժանելի մաս.
- 12.3.2. մասնակցել ինքնագնահատման և դասընկերների գնահատման գործընթացին.
- 12.3.3. հանձնել ցանկացած պահանջվող աշխատանք՝ յուրացման առաջադրանքներ, դասարանական աշխատանքներ, նախագծեր և այլն՝ պահպանելով նշված ժամկետները.
- 12.3.4. ապահովել ներկայացված ցանկացած աշխատանքի կոկիկությունն ու նպատակահարմարությունը.
- 12.3.5. մասնակցել գնահատման պլանավորման գործընթացին.
- 12.3.6. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին:



12.4. Ծնող

Ծնողները պարտավոր են՝

- 12.4.1. ծանոթանալ գնահատման նպատակներին, սկզբունքներին, ձևերին և տեսակներին.
- 12.4.2. ընդունել գնահատման քաղաքականության փաստաթղթի պայմանները.
- 12.4.3. աջակցել սովորողներին գնահատման հմտությունները զարգացնելու հարցում՝ տանը բարենպաստ միջավայր ապահովելով:
- 12.4.4. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին:

Սույն քաղաքականությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, որոնց միջև հակասության դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն լեզվին:



13. Հղումներ

Ակադեմիական ամբողջականություն, IBO, 2019 թ

Գնահատման ընթացակարգեր, IBO, 2020 թ

Դիպլոմային ծրագրի գնահատում. Սկզբունքներ և պրակտիկա, IBO, 2009

Դիպլոմային ծրագիր. Սկզբունքներից դեպի գործնական պրակտիկա, IBO, 2015

Ընդհանուր կանոնակարգ. Դիպլոմային ծրագիր, IBO, 2016 թ

Դիպլոմային ծրագրում դպրոցի գնահատման քաղաքականության մշակման ուղեցույցներ

14. Հավելվածներ

Հավելված 1: ՄԲԴԾ-ի (IBDP) առարկայի նպատակները, արտաքին և ներքին գնահատման առաջադրանքները

Առարկա	Նպատակները	Արտաքին և ներքին գնահատման առաջադրանքները	
Լեզուներ Ա մակարդակ Գրականություն Հայերեն Անգլերեն Թուսերեն	1. Գիտելիք և ըմբռնում. վերլուծություն, համադրում և գնահատում: 2. Ներկայացման ձևի և լեզվական հմտությունների ընտրություն և կիրառում:	Արտաքին գնահատում. SL (հենքային ուսուցում). 1-ին և 2-րդ ձևաչափի գրավոր առաջադրանքներ: Ներքին գնահատում. • Անհատական բանավոր լուսաբանում • Անհատական բանավոր ներկայացում:	Արտաքին գնահատում HL (խորացված ուսուցում). • 1-ին և 2-րդ ձևաչափի գրավոր առաջադրանք: Ներքին գնահատում. • Անհատական բանավոր լուսաբանում • Անհատական բանավոր ներկայացում:



<p>Լեզուներ. Բ մակարդակ</p> <p>Անգլերեն Ռուսերեն Գերմաներեն Ֆրանսերեն Իսպաներեն</p>	<ol style="list-style-type: none"> 1. Հստակ և արդյու նավետ հաղորդա կցվել մի շարք համատեքստերում և տարբեր նպատակների համար: 2. Հասկանալ և կիրառել լեզուն՝ համապատասխանեցնելով վերջինս միջանձնային և (կամ) միջմշակութային համատեքստերին և լսարաններին: 3. Հասկանալ և կիրառել լեզուն՝ մի շարք գաղափարներ սահուն և ճշգրիտ արտահայտելու և դրանց արձագանքելու համար: 4. Ճանաչել, կազմակերպել և ներկայացնել գաղափարներ մի շարք թեմաների վերաբերյալ: 5. Հասկանալ, վերլուծել և անդրադարձ կատարել գրավոր, աուդիո, տեսա և աուդիո-վիզուալ տեքստերին: 	<p>Արտաքին գնահատում. SL</p> <ul style="list-style-type: none"> • ձևաչափ 1 • ձևաչափ 2 <p>Ներքին գնահատում. Անհատական բանավոր գնահատում :</p>	<p>Արտաքին գնահատում. SL</p> <ul style="list-style-type: none"> • ձևաչափ 1 • ձևաչափ 2 <p>Ներքին գնահատում. Անհատական բանավոր գնահատում:</p>
---	---	--	---



